

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

04.03.2022թ.

ք. Երևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության /այսուհետ՝ Ծառայություն/ Երևան քաղաքի Ավան, Նոր Նորք և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության ավագ լեյտենանտ՝ Արմենուհի Մելքոնյանս ուսումնասիրելով թիվ 06550685 կատարողական վարույթի նյութերը՝

**Պ Ա Ր Զ Ե Ց Ի**

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 13.08.2020թ. տրված թիվ ԵԴ/8087/02/20 կատարողական թերթի համաձայն պետք է Էլիզա Ալբերտի Սահակյանից «Յունիբանկ» ԲԲԸ-ի օգտին բռնագանձել 233.860 ՀՀ դրամ և վճռով հաշվարկվող տոկոսները:

Պարտապանից բռնագանձել նաև բռնագանձման ենթակա գումարի 5%-ը, որպես կատարողական գործողությունների կատարման ծախսի գումար:

Ձեռնարկված կատարողական գործողությունների կատարման ընթացքում պարզվել է, որ պարտապանի անվամբ Ծառայությունում առկա են հարուցված բռնագանձման բնույթի այլ կատարողական վարույթներ: Կատարողական վարույթով բռնագանձման վերաբերյալ վճռի կատարման ընթացքում պարտապան Էլիզա Ալբերտի Սահակյանի ողջ գույքի նկատմամբ բռնագանձում տարածելու պարագայում պարզվել է, որ այդ գույքը օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի և ավել չափով բավարար չէ պահանջատիրոջ հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար և պարտապանին պատկանող այլ գույք և դրամական միջոցներ չեն հայտնաբերվել, որոնց վրա կարելի է բռնագանձում տարածել:

**Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28.1, 28 հոդվածներով և 37-րդ հոդվածի 8-րդ կետով.**

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

Կասեցնել թիվ 06550685 կատարողական վարույթը 90-օրյա ժամկետով:

Առաջարկել պահանջատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ 90-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան:

Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել [www.azdarar.am](http://www.azdarar.am) ինտերնետային կայքում:

**Որոշման պատճենն ուղարկել կողմերին.**

Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադատության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

Ավագ հարկադիր կատարող,

Արդարադատության ավագ լեյտենանտ

Ա.Մելքոնյան